ցիչները բացասական կարծիք յայտնեցին այդ նոր կանոնադրութեան մասին, ասելով՝ որ թէև շատ ցանկալի է Հոգևոր դպրոցների բարեկարգութիւնը (բեֆորման) և նոյն իսկ կարևոր, բայց այնպէս, ինչպէս նախագծել է ս. Սինոդը՝ հազիւ թէ նպատակայարմար լինի։ Նախարարութեանց ներկայացուցիչները յայտնեցին բացասական կարծիք հոգևոր գիմնազիաների վեցերորդ դասարանը աւարտող աշակերտներին կլասիկ գիմնազիաների եօթներորդ դասարան ընդունելու խնդրի մասին։ Նախարարութեան համար պարզ չէ, թէ ինչ են ներկայացնում իրանցից վեցդասարանեան հոգևոր գիմնազիաները և ովքեր պէտք է ղեկավարեն այդ տիպի դպրոցները, ուստի և հնարաւոր չէ համարում թոյլատրել այդ դպրոցն աւարտող սաներին մտնել կլասիկ գիմնազիան։ Հոգևոր գիմնազիաներում 74 առարկայից շաբաթական 21 յատկացուած է կրօնի դասերին, իսկ 12-ը երգեցողութեան, որից յիտոյ հարց է ծագում, թէ միւս առարկաներից իւրաքանչիւրին արդեօք քանի՞ դաս է թողնուած։

Ժողովրդական լուսաւորութեան ներկայացուցիչ Վարանցովսկին ցանկութիւն յայտնեց Հոգևոր գիմնազիաների 6-րդ դասարանի դասընթացը հաւասարեցնել կլասիկ գիմնազիայի նոյն դասարանի դասընթացին։ Միայն այդ դէպքում, փորձի համար, նախարարութիւնը թոյլ կը տայ հոգևոր դպրոցի 6 դասարանից մտնել կլասիկ գիմնազիայի 7-երորդ դասարանը։ Ալէքսէյ եպիսկոպոսը, իբրև յանձնաժողովի նախագահ, յայտնեց նախարարութեանց ներկայացուցիչներին, որ հոգևոր վարչութիւնն անընդունելի է համարում իր համար նախարարութեան պայմանները, ի նկատի առնելով, որ դորանով ժողովրդական լուսաւորութեան վարչութիւնը աճուդդակի նանապարհով մտնում է հոգևոր վարչութեան կրթական գործի մէջ, եւ հոգևոր դպրոցի բարեկարգութեան փոխարէն ոչնչանում է նորա իմքնուրոյնութիւնը։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Ամերիկական եպիսկոպոսական եկեղեցու գլխաւոր համագումարը։ Անցեալ Հոկտ. 25-ին Նիւ Եօրկ քաղաքում կայացել է Ամերիկական եպիսկոպոսական եկեղեցու գլխաւոր համագումարը, որն ունի ընդհանուր օրէնսդրական-վարչական ընոյթ և կայանում է իւրաքանչիւր երեք տարին լրանալուց։ Նախագահել է եպիսկոպոսների համագումարին Հարաւային շրջանի Վինսենտ եպիսկոպոսը, իսկ պատգամաւորների ժողովին Բոստոնի երրորդութեան եկեղեցու

վերատեսուչ դոկտոր Մաննն։ Իւրաքանչիւր թեմ ուղարկել է 4 հոգևորական և 4 աշխարհական պատգամաւորներ։ Ժողովում տաք վէճի խնդիր է դարձել հեռացնելու իրենց եկեղեցու պաշտօնական անունից «Բողոքական» *բառը, որը շատ տարիներ առաջ «Կաթոլիկ» կուսակցութեան ներկայացուցիչների կողմից է առաջ եկել։ Այս մասին խօսք է եղել և 1910 թ. ժողովում։ Այս խնդրի դէմ դանապան արգելքներ են յարուցել «Կաթոլիկ» կուսակցութեան ներկայացուցիչները։ Ժողովում արծարծուել է այլ կարևոր խնդիրներ, որոնցից ընդունուել են 1) գոյութիւն ունեցող ութ միսիօներական շրջանները վերածելու աւելի փոքր շրջանների օրէնսդրական խորհուրդներով. 2) քահանաների կենսաթոշակի մասին, որոնք թողնումեն իրենց ծառայութիւնը 65 և աւելի տարեկան հասակում. և 3) վանական դասակարգի մասին. եպիսկոպոսական եկեղեցին այժմ պաշտօնապէս ընդունում է վանականութիւնը։ Իւրաքանչիւր վանական ուխտի կանոնադրութիւնը հաստատւում է այն եպիսկոպոսից, որի թեմում գտնւում է այդ ուխտը։ Այդ ժողովում կարգուել է Յանձնաժողով քննելու պսակի և ամուսնալուծութեան վերաբերեալ խնդիրների մասին։ Ի միջի այլոց մի այլ Յանձնաժողովի յանձնարարուած է կազմել սուրբ գրքի ընթերցուածների նոր ցանկ. յանձնարարուած է բոլոր հաւատացեալներին Մեծի աւագ Ուրբաթ օրուայ երրորդ ժամին* ճիշդ րոպէ *պահպանել լռութիւն աղօթքով ի յիշատակ Փրկչի տանջանաց և խաչի գահի բոլորիս համար։ Թոյլատրուած է այլ և եպիսկոպոսների կողմից՝ այնտեղ՝ որտեղ հաղորդութիւնը ընդհանուր սկիհից ներկայանում է վտանգաւոր առողջապահական տեսակէտից, գործադրել հաղորդութեան այն ձևը, որ ընդունուած է ռուսաց եկեղեցում։ Առանձին խորհրդածութեան խնդիր եղաւ միսիօներական գործը, որի յաջող առաքելութեան համար երեք տարուայ ընթացքում գումարուել է 3.797,000 դոլլար, (իւրաքանչիւր դոլլարը մօտ 2 ռուբլի է)։*